

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՕՆ ԵՒ ԻԻՐ ԷՄԻԼԸ

Ութսունական թուականներին, երբ մեր եկեղեցական դպրոցների թիւն հետզհետէ աւելանում էր, հալ հասարակութեան մէջ հետաքրքրութիւն էր առաջացել մանկավարժական և դաստիարակչական խնդիրների վերաբերմամբ. ոչ թէ միայն մասնագիտական-մանկավարժական ամսագրեր էին գոյութիւն ստացել, այլ նոյն իսկ մեր օրաթերթերի էջերն էլ լի էին լինում մանկավարժական կամ դպրոցական խնդրին վերաբերեալ յօդուածներով ու թղթակցութիւններով։ Գրում էին թէ մեր սակաւաթիւ մասնագէտ մանկավարժները և թէ թեմական դպրոցներում մանկավարժութեան ալրուբնն ուսած ուսուցիչները, մի խօսքով՝ դաստիարակութեան խնդիրն արծարծւում էր և մուտք գործում ժողովրդի բոլոր խաւերի մէջ, իսկ թէ ինչ արդիւնք ունեցաւ այդ բոլորը, լալտնի է ամեն մի բանիմաց հալ մարդու։

Այժմ մեր հասարակութեան մէջ, տարաբաղդաբար, այդ հետաքրքրութիւնը չկալ դաստիարակութեան վերաբերութեամբ և ամեն բան թողնուած է բաղդի բերմունքին. ասում ենք տարաբաղդաբար, որովհետեւ դաստիարակութիւնից է կախուած մեր ապագալ սերունդների մտքի և բարոյական դադափարների կազմը, աւելի ևս, ապագալ սերունդների ինքնուրոյնութեան գոյութիւնը, Գուցէ մեզ առարկեն, թէ քանի որ դըպրոցներ համարեն թէ չունենք, էլ ինչ նշանակութիւն կարող է ունենալ դաստիարակութեան խնդիրներով զբաղուելը. ալդպիսի հալեացքը բոլորովին անճիշտ կլինի։ Դաստիարակութիւնը, ճիշտ է, կազ ունի նաև դըպրոցի հետ, սակայն նրա անմիջական և աւելի էական սերտ կապն ընտանիքի հետ է. ընտանիքն է դաստիարակութեան բուն կենդրոնը, սիզբնակէտն ու վերջնակէտը։ Ընտանեկան դաստիարակութիւնն է պահպանում աղգերի առանձնալատով և դարերի ընթացքում ձեռք բերած ինքնուրոյնութիւնը. ալն հասարա-

կութեան մէջ, ուր ընտանեկան դաստիարակութիւնն չկալ, սե-
րունդները շատ շուտ են ենթարկուում շրջապատող հանգամանք-
ների ազդեցութեանը և մոռացութեան տալիս սեպականքը, իսկ
ընդհակառակն ընտանեկան հիմնաւոր դաստիարակութիւնն ու-
նեցող սերունդները դիմադրում են շրջապատող ժամանակա-
ւոր աննպաստ հանգամանքներին և շուտափոխ չեն կորցնում
ալն, ինչ որ երկար դարերի ընթացքում ձեռք են բերել,
ինչ որ իրենց գոյութեան հիմքն է կաղմում և որոնց ոչնչաց-
մամբ՝ իրենք էլ պէտք է ոչնչանան:

Ուրեմն հալ հասարակութիւնը, անկախ դպրոցական խըն-
դրից, երբէք չպէտք է մոռացութեան տալ դաստիարակու-
թեան խնդիրը և մեր պարբերական մամուլն ևս պէտք է
նպաստէ, որ ալդ խնդրին վերաբերեալ հետաքրքրութիւնը միշտ
վառ մնալ մեր ժողովրդի մէջ:

Գտան տարի է ան, որ մեր տկար գրիչը բանեցնում
ենք հալ զրական ասպարիզում և միշտ սիրով ենք շօշափել
մանկավարժական խնդիրները, որքան հարկաւ թող են տուել
արտփքին հանգամանքները: Ինչքան միշտ ալ կարծիքի ենք
եղել, որ մեր ժամանակակից մանկավարժական նորագոյն դա-
շտիւարները չեն կարող մեր մէջ հաստատուն արմատներ քոռ-
նել, եթէ մեր ըմբռնողութիւնը նախապատրաստուած չէ պատ-
մական անցեալի հիմնական հալեացքներով: Նորագոյն ման-
կավարժական տեսութիւնների սաղմերը պարունակում են
Պետտալոցցու, Ժան-Ժակ Ռուսօի, Նիմալէրի և ալ նշանաւոր
մանկավարժների տաղանդաւոր գրուածքների մէջ: Ուստի և
առաջիկաները լաւ ըմբռնելու համար պէտք է գիտենալ և հաս-
կանալ վերջիները: Այս տեսակէտից առաջնորդուած ան
մենք հալերէն թարգմանել և հրատարակել ենք Պետտալոցցու
ամենանշանաւոր գործը—Լինհարդ և Գերտրուդը—և ալժմ էլ
տալիս ենք Ժան-Ժակ Ռուսօի ամենալայտնի աշխատութիւնը
—Էմիլը, որ իւր ժամանակ մեծ ազմուկներ է լարուցել և
կարելի է ասել, որ մինչև ալժմ էլ դեռ չէ կորցրել իւր թար-
մութիւնը:

Հալ ընթերցողին էմիլն ըմբռնելու դիւրութիւն տալու
համար՝ համառօտ նկարագրում ենք Ժ. Ժ. Ռուսօի կեանքը,
նրա գլխաւոր աշխատութիւնների էութիւնը և էմիլի հիմնա-
կան գաղափարները:

Ռուսօի կենսագրութեան իսկական աղբիւրն է նրա «խոս-

տովանութիւններ»—Confessions—կոչուած բացառիկ աշխատութիւնը, որտեղ հեղինակն ասում է. «Աս իմ ճանաչած մարդկանց նման չեմ և համարձակուում եմ կարծելու, որ առհասարակ ներկայումս գոլութիւն ունեցող մարդկանցից չեմ. եթէ նրանցից լաւն էլ չեմ, գոնէ նրանց նման չեմ... ես իմ ներքին, հոգեկան աշխարհը երեան հանեցի, մարդկանց անթիւ բաղմութիւնը թող լսէ իմ խոստովանութիւնները, թող նրանք իմ անարժանաւորութիւնների համար կարմրեն և իմ ցածութիւնների համար հառաչեն: Թող դրանցից իւրաքանչիւրն իւր կողմից նոյն անկեղծութեամբ իւր սիրտը բանալ և թող դրանցից գոնէ մէկը համարձակուի ասել. ես աւելի լաւ էի, քան ալս մարդը»: Մի ուրիշ տեղ ասում է. «Աշխարհիս երեսին ինձնից աւելի լաւ ոչ ոք չէ ճանաչում ինձ. ես չեմ վախճնում նկարագրել ինձ աչպէս, ինչպէս որ կամ. ես գիտեմ իմ մեծ թերութիւնները և կենդանի կերպով զգում եմ իմ մոլութիւնները. բայց աշուտամենաշիւ ես կենեմ, հաստատ համոզուած լինելով, որ ալս բոլոր մարդկանցից, որոնց ես ճանաչել եմ իմ ամբողջ կեանքի ընթացքում, ոչ մէկն ինձնից աւելի լաւ էէր»:

Աս տողերը հարկաւ միմիայն պարծենկոտութեամբ չի կարելի բացատրել. ժամանակակից բարոյական հպեացքները և Ռուսօի տառապանքները լցրել էին նրա սիրտը դառնութեամբ. ալդ պատճառով նա չնաչելով իւր խոշոր բարոյական թերութիւններին, ինքն իրեն ուրիշներից դարձեալ բարձր է համարում. Հանճարեղ ինքնուրոյնութեամբ նա համարձակ դուրս է գալիս իւր ժամանակակիցների դէմ և անէծք թափում նրանց բարոյական թերութիւնների դէմ, սակայն, մարդկային թուլութեամբ, ինքն էլ զերծ չէ մնում անբարոյակալութեան տղմոտ կոհակների մէջ ցեխոտուելուց:

Ժան-Ժակ Ռուսօն ծնուել է 1712 թ. Ժընև քաղաքում. նրա հայրն աննշան կարողութեան տէր ժամագործ էր, իսկ մայրը քահանայի աղջիկ, զարգացած ու հոգեկան լաւ լատիութիւններ ունեցող. Ռուսօի ծնունդը զժբաղղ եղաւ, որովհետեւ մայրը զաւակին կեանք տալով, ինքը կեանքից զրկուեց: Մանուկը մեծացաւ առանց մայրական քնքով սիրոյ և խնամքի. եօթը տարեկան հասակից նա հօր հետ միասին արդէն կարդում էր մօր թողած գրադարանում գտնուող վէպերը և դասական գրուածները, որոնցից ամենից շատ գրաւում էր նրան

Պըտտարքոսը։ Ռուսոն ինքն իւր մանկական տարիներէ մասին ասում է. «ես շաղկերատ էի, շատակեր և երբեմն էլ ստում էի. պտուղ, շաքարեղէն, ուտելիք գողացած կ'լինեմ, բայց երբէք զուարճութիւն չէի գտնում՝ չարութիւն անելու, բան փչացնելու, մէկին խփելու մէջ»։ Բայց անմիջապէս լեռով շարունակում է, թէ ինչպէս ինքը դրացու ամանը կեղտոտում է և ծիծաղում իր արածի վրայ. «այս է, աւելացնում է նա, իմ մանկական չարութիւնների համառօտ, իսկական պատմութիւնը. ինչպէս պէտք է չար լինէի, քանի որ քնքշութեան օրինակներ ունէի միշտ ի նկատի և ամենալաւ մարդկանցով էի շրջապատուած»։ Այսպէսով Ռուսոն պատմելով իւր մանկական չարութիւնները, միևնույն ժամանակ իւր անմեղութեան վրայ է պնդում։

Մի ինչ որ վէճի առիթով Ժան-Ժակի հայրը հեռանում է Ժընևից և որդուն տալիս մի մասնաւոր դպրոց. բայց միայն երկու տարի է մնում նա դպրոցում և պղնձադրոշմողի աշակերտ դառնում վարպետի խստութեան պատճառով ալդտեղից էլ փախչում է 15 տարեկան հասակում։ Այսպիսով Ժան-Ժակը համարեմ ոչինչ չէ սովորում և մինչև պատանեկական հասակը միայն երկու տարի է դպրոցի երես տեսնում. հայրը ժամանակ չունենալով իւր որդու մասին հոգալու, բաղդի բերմունքին է թողնում խեղճ երեխային, որ ժամանակից առաջ իրեն բոլորովին ազատ զգալով՝ արկածներով լի և անխնամ կեանք է վարում ու մոլորւում։

Վարպետի մօտից փախչելով՝ նա Սաւոյեա է գնում ու մի կաթոլիկ քահանայի դիմում. վերջինս նրան Աննէսի է ուղարկում տիկին Վարենսի մօտ։ Վարենսը դաւանափոխութեան շնորհիւ թոշակ ստանալով, պատանի Ռուսոն էլ համոզում է կաթոլիկութիւն ընդունել. կամազորիկ, դատարկ գրպանի տէր և փախստական Ժան-Ժակը համաձայնութիւն է լալտնում և ուղարկւում Տուրին՝ նախապատրաստուելու, որպէս զի հաւատով և երկրիշաճ կաթոլիկ լինի։ Ալդտեղ անձ 16 ամեայ պատանին բողոքական եկեղեցին թողնելով կաթոլիկութեան գիրկն է ընկնում և գրպանը մի քանի ոսկի դնելով՝ նորից վերադառնում տիկին Վարենսի մօտ 1732 թ. և նրա մօտ մնում մինչև 1741 թ. Ռուսոն սիրալին շարաբերութիւն է սկսում իւր բարեբար տիկնոջ հետ, թէև շարունակ

նրան «մամա» է կոչում: «Մամա»-ի հովանաւորութեան ներքոյ նա երաժշտութեամբ է պարապում և նկարչութեամբ. տէրնուհետեւ գնում է նախ Լօզան՝ իրրեւ երաժշտութեան ուսուցիչ, ապա Լիօն: Լիօնից ոտքով ճանապարհորդում է մինչև Փարիզ ու կրկին վերադառնում Լիօն, բայց չկարողանալով բաւականաչափ ապրուստ հալթալթել, կրկին լիշում է «մամալին» և վերադառնում նրա մօտ: Այդ միջոցին Ռուսօի միտքն արնաքան զարգացել էր ինքնակրթութեամբ, որ նա կարդում էր Լոթէ, Լալլենից, Դեքարտ փիլիսոփաների շարադրութիւնները և ապա պարապում մատեմատիկայով և լատիներէն լեզուի ուսումնասիրութեամբ: 1741 թ. գնում է Փարիզ, յոյս ունենալով թէ մեծ լաշոդութիւն պէտք է ունենալ իւր գիւտով. երաժշտական խաղերը նա մտածել էր թուանշանների փոխել: 1742 թ. ակադէմիայում—Académie des sciences—կարդում է արդ մասին մի բանախօսութիւն, բայց նրա առաջարկն ընդունելութիւն չէ գտնում, Կրած անլաշոդութիւնից լետոյ նա վննետկի ֆրանսիական դեսպանի քարտուղարի պաշտօնն է ստանձնում և տասնևութ ամիս վարելով արդ պաշտօնը՝ չափազանց արկածալի ու անդուստ կեանք է վարում արդ քաղաքում և նորից վերադառնում Փարիզ:

Անլաշոդութիւններն իրենց ներգործութիւնն ունեցան Ռուսօի հոգեկան աշխարհի վրայ. նրա սրտում բուռն դրեց զըժ. դոնութիւն քաղաքացիական անկանոն կարգերի դէմ, որ ապագայում աւելի որոշ արտալայտութիւն ստացաւ նրա գրուածքների մէջ:

1749 թ. Ռուսօն պատահմամբ կարդում է մի լրագրում Դիժօնի ակադեմիայի լաւտարարութիւնը, որով մրցանակ էր նշանակում մի գրական աշխատութեան համար, որի մէջ պէտք է լուսաբանուէր՝ թէ արդեօք «գիտութիւնների և արուեստների առաջադիմութիւնը նպաստել է բարքերի մաքրութեանը»: Լաւտարարութիւնը կարդալն ու արդ հարցմանը պատասխանելու վճիռը մէկ է լինում: Այնուհետեւ անքուն գիշերներ է անցկացնում և նոյն իսկ անկողնում պառկած թելադրում իւր մտքերը, որոնք լուսաբանում են արդ խնդիրը: Հետեւեալ տարին նրա աշխատութիւնն արժանանում է ակադեմիայի մրցանակին, թէև ինքը հեղինակն իւր արդ երկի մասին ասում է. «Այս աշխատութիւնը թէև ջերմութեամբ և ոյժով լի է, սակայն տրամաբանութիւնից և կարգաւորութիւ-

նից զուրկ է. իմ բոլոր գրուածքների մէջ ամենից թուլն է խոհական պատճառաբանութեան տեսակէտից: Որքան էլ որ բնածին տաղանդ ունենանք, ակնուամենայնիւ գրելու արուեստը միանգամից չենք կարող սովորել:

Մրցանակի արժանացած ալդ աշխատութիւնն երկու մասի է բաժանուած. առաջին մասում հեղինակն աշխատում է պատմաբանօրէն ապացուցանել բարոյադիտական և մտաւոր կրթութեան մէջ եղած տարածափոփոխութիւնը. մտաւոր կրթութիւնը մարդկանց աւելի ընկերական և քաղաքավարի է դարձրել, բայց իսկական առաքինութեան փոխարէն սովորեցրել է նրանց՝ առաքինի երևալ, Հրապարակական, բացալատ մեղքերի փոխարէն առաջացել են երկչոտ, շողոքօրթ լանցանքները. կոպիտ վիրաւորանքի տեղը բռնել է զրպարտութիւնն ու չարախօսութիւնը. մոլութիւններն առաքինութիւնների տեղ են ընդունուում: Այս բոլորի պատճառն է գիտութիւնների և արուեստների բարգաւաճումը. առաքինութիւնը վերացել է ալն չափով, որ չափով որ լուսաւորութեան արեգակը բարձրացել է հօրիզոնից. ալդպէս է եղել Նգիպոստում, Յունաստանում, Հռովմում և ալլն. և ընդհակառակն՝ առաքինութիւնը զնահատուել է աւելի պակաս լուսաւորուած երկրներում, օրինակ հին պարսից, սկիւթացիների, գերմանացիների սպարտացիների մօտ և ալլն: Նա մանաւանդ Հռովմում հալորենասիրութիւնը վերացաւ, երբ փիլիսոփաներն ու արուեստագէտներն առաջ եկան և իրենց հետ ընդհանրութիւն և մոլութիւններ...

Երկրորդ մասում Ռուսոն խօսում է գիտութիւնների աղբիւրների մասին և բացատրում, որ բոլոր գիտութիւններն ու արուեստներն առաջանում են մեր մոլութիւններից. արուեստները ծառայում են զեղխութեան. ինչի էր պէտք իրաւաբանութիւնը, եթէ մարդկանց անարդարութիւնը չլինէր. Թնչ կլինէր պատմութիւնը, թէ բռնաւորներ և պատերազմներ չլինէին: Անմիտ դատաւարակութիւնն անտես է անում բարոյականութիւնը և ի հաշիւ դրա՝ կրթում խոհականութիւնը. բանն ալնտեղ է հասել, որ չեն հարցնում թէ արդեօք մի որևէ գիրք օգտակար է թէ ոչ, ալլ թէ՛ լաւ է գրուած. առաւելութիւն է տրուում հաճելի տաղանդներին ի հաշիւ օգտակարների և ալլ փիլիսոփաներն իսկական չարլատանների մի խումբ են կալմում. դրանցից իւրաքանչիւրը կանչում է. ինձ մօտ եկէք:

միայն ես եմ, որ ձեզ չեմ խաբում. մէկն աւելի անմիտ բաներ է ուսուցանում քան միւսը և տպագրութեան արուեստով ալդ լիմարութիւնը չաջորդ սերունդներին է հաղորդւում: Նթէ չաջորդ սերունդները մեզնից անմիտ չլինեն, պէտք է աղաղակեն. ամենակարող Աստուած, աղաաթիւր մեզ մեր հայրերի լուսաւորութիւնից և փշացնող արուեստներից և կրկին անդիտութիւն, անմեղութիւն և աղքատութիւն տուր մեզ, դրանք միայն մեզ երջանիկ կարող են դարձնել:—Ո՛չ, միայն ամենամեծ տաղանդները, ինչպէս Նիւտոնը, Բակոն, Դեկարդը, պէտք է նուիրուէին գիտութեան. միմիայն դրանք և ճշ մի միջակ ընդունակութեան տէր մարդ:»

Սրանք են Ռուսօյի մրցանակի արժանացած աշխատութեան էական մտքերը, որոնք մեծ տպաւորութիւն թողին և շատ հերքումների առիթ տուին. ի միջի ալլոց Ռուսօի դէմ գրեցին նաև լեհաց նախկին թագաւոր Ստանիսլաւը և Լէսսինգը: Ռուսօի առաքինութեան գաղափարը քրիստոնէական առաքինութիւնը չէր, և լլ Ստոյիկեանների կեղծ իղէալը. քրիստոնէական առաքինութիւն երբէք գիտութեան և արուեստների հակառակ չէ. ժան ժակն ինքն էլ վերջը, լէմիլում պահանջում է, որ մանուկների կրթութիւնն ի նկատի ունենալ թէ բարոյագիտական և թէ խոհական զարգացումը:

1752 թ. Ռուսօն վտանգաւոր կերպով հիւանդացաւ և նրա բժիշկը կարծում էր, թէ նա վեց ամսից աւելի չի ապրի. ալսպիսի դրութեան մէջ հիւանդը վճռեց ապրել քոլորովին անկախ, բայց աղքատ. նա մի կողմը դրեց մետաքսեալ գուլպաներն ու սուրը, ծախեց ժամացույցը և աշխատում էր ապրել աղքատ, որ որքան կարելի է մօտ լինի մարդու սկզբնական, բնական կեանքին, ալսպիսով նա կամենում էր իւր կեանքը լարմարեցնել իւր քարոզած մտքերին. «մինչև ամի ժամանակ ես բարի էի, ասում է ինքը, ալժմ առաքինի դարձաւ»:

1753 թ. Դիժոնի ակադեմիան մրցանակ նշանակեց այն աշխատութեան համար, որ պէտք է լուսաբանէր «մարդկանց անհաւասարութեան պատճառները». Ռուսօն ներկայացրեց իւր հետազոտութիւնը, բայց մրցանակ չստացաւ. ալդ աշխատութեան մասին հեղինակն ասում է. սես կալւ մղեցի մարդկանց փոքրիկ ստերի դէմ, ես համարձակո եցի մարդկալին բնութիւնն իւր ամբողջ մերկութեամբ նկարագրելու, ժամանակի և իրերի առաջադիմութեան հետեւելու, որոնցով ապականուեց մեր

քնութիւնը. ես մարդուն բնական մարդու հետ համեմատեցի, որպէս զի մարդկանց ցոյց տամ իրենց թշուառութեան իսկական աղբիւրը. հոգւք, անմիտներ, բացազանչում է Ռուսօն, որ անդադար դանգաժուում էք բնութեան մասին, իմացէք, որ ձեր բոլոր թշուառութիւնները հենց ձեզնից են սկիզբն առնում. նա նկարագրում է իւր մտացածին բնական մարդկանց յարաբերութիւնները և պատմում թէ ինչպէս ալդ սկզբնական, բնական դրութիւնից հետզհետէ առաջանում է իւր ժամանակի սարսափելի քաղաքակիրթ դրութիւնը: Ռուսօի այս աշխատութիւնը և Contrat social-ը պարունակում են ֆրանսիական լեղափոխութեան սաղմերը. ազատութիւն, հաւասարութիւն, ժողովրդի իշխանութիւն, գաղափարները, որ լեղափոխութեան նշանաբանները դարձան, Ռուսօի խօսքերն են. նոյն իսկ լեղափոխականները՝ Contrat social-ը լեղափոխութեան փարոս էին անուանում...

1754 թ. Ռուսօն գնում է իւր ծննդավայրը, Ժընևը, նորից դառնում է բողոքականութեան և կամենում է անտեղ հաստատուել, բայց թողնում է ալդ մտադրութիւնը, որովհետև ալդ միջոցին ֆրանսիական միւս հանճարեղ մտածողը, Վօլտէրը, բնակավայր էր ընտրել Ժընևի մօտ գտնուող ֆէրնէյ:

1756 թ. Ժան Ժակը հաստատուեց ֓արիզից ոչ հեռու եղած Վէրմիտաժում և մի մեծ աշխատութեան ձեռնարկեց, որով ուղղում էր պարզել՝ թէ պետական վարչական ո՞ր ձևը կարող է տալ ժողովրդին ամենաբարձր առաքնութիւնը, լուսաւորութիւնը, իմաստութիւնն ու բարիքը: Այս աշխատութիւնը չվերջացրեց հեղինակը և նրա միայն մի մասը, Contrat Social-ը, տպագրուեց:

1757 թ. Ռուսօն Մօնմօրէնսում գրեց Նոր Հելօիդը և Էմիլը. վերջինիս ձեռագրի համար գրավաճառից 6000 ֆրանք ստանալով (1760 թ.): Ալդ միջոցներին լեղափոխութեան երկիւղն արդէն տիրել էր շատերին և Ռուսօն մտածում է Ֆրանսիայից դուրս բնակավայր ունենալու մասին: Երբ Էմիլը տպագրուելով՝ բովանդակութիւնը լայտնի եղաւ, հեղինակի անձնական ապահովութիւնը վտանգի ենթարկուեց. նա լսելով, որ արքայական պալատը և պարլամենտը վճռել են իրեն բանտարկել ալդ աշխատութեան առթիւ, փախուստ է տալիս Զուիցերլիա և սկզբում հաստատուում է Իվերդունում, որ վերջը

լատնի եղաւ Պետաւոցցու շնորհիւ Բայց շուտով Իվերդունից էլ հալածուեց և դնաց Մօտիէր՝ վախելով պրուսական թագաւոր Ֆրիդրիկոս II-ի հովանաւորութիւնը:

Ֆրանսիական պարլամենտի վճռով «Էմիլը» պատռտուեց և դահճի ձեռքով հրապարակաւ արուեց. փարիզի արքեպիսկոպոսը նշովեց ալդ գիրքը ու արգելեց կարդալ. Սօրբօնն էլ նոյն վճիռն արձակեց. Ռուսօի ծննդավայր Ժընեը նոյնպէս, երեւի Ֆրանսիային դուր գալու համար, հեղինակին բանտարկելու և գիրքն արելու հրաման արձակեց. Բայց ինչո՞ւ էր հալածուած «Էմիլը»։ մի մանկավարժական գրուածք ինչո՞ւ պէտք է աղքատ զայրացնէր երկրների կառավարիչներին։ Ռուսօն էմիլի մէջ մի միջանկեալ պատմութիւն էր տեղաւորել «Մաւոյեան աթոռակալի հաւատոյ խոստովանանքը» վերնագրով, որով և միաժամանակ գրգռեց թէ եղուիտներին ու օրթողոքսներին, թէ փիլիսոփաներին ու արքայականներին։ Սակայն այս հալածանքն ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը դարձրեց Ռուսօի և «Էմիլի» վրայ. շատերը նշովում, շատերն էլ պաշտպանում էին թէ գրուածքը և թէ հեղինակին. մի խօսքով մեծ ազդեցութիւն ունեցաւ ալդ աշխատութիւնը մարդկանց զգացմունքների ու մտքերի վրայ:

«Մաւոյեան աթոռակալի հաւատոյ խոստովանանք» ի առաջին մասում Ռուսօն մի ըստ կարելոյն շողոքորթ նկարագրութիւն է տալիս այսպէս կոչուած բնական կրօնի մասին. իսկ երկրորդ մասում Յալտնութեան ըստ մեծի մասին չարանեղ քննութիւնը։ Ալդ հատուածի սկզբում Ռուսօն սաստիկ լարձակում է փիլիսոփաների վրայ՝ իբրեւ թէ նրանք շատ հպարտ են, կարծում են թէ ամեն բան դիտեն, բայց ոչինչ չեն կարողանում ապացուցանել. դրանք ո՛չ թէ լանուս ճշմարտութեան են գրում և տքնում, ալ որպէս զի իրենց տեսութիւնն ընդունուի և իրենք էլ մի որեւէ կերպով աչքի ընկնեն։ Յետոյ Ժան-Ժակն իւր բնական կրօնի դաւանանքն է առաջ բերում. «ես հաւատում եմ, ասում է նա, որ մի կամք շարժում է տիեզերքը և բնութեանը կենդանութիւն տալիս. այն էութիւնը, որ կամենում է և կարողանում, որ ինքն իրեն գործելով՝ շարժում է տիեզերքը և ամեն բան կարգաւորում, ես անուանում եմ Աստուած։ Միայն մի գիրք կալ ամենքի աչքի առաջը բաց, բնութեան գիրքը. այս վեհ գրքի մէջ սովորում եմ ես ծառայել և աղօթել նրա Աստուածային սկզբնապատճառին, ոչ

ոքի չի կարելի ներել, որ չէ կարգում ալդ գիրքը, որովհետեւ նա բոլոր մարդկանց հետ հասկանալի լեզուով է խօսում: Եթէ ես մի անապատ կղզում ծնուած լինէի, բացի ինձնից ոչ ոքին տեսած չլինէի և երբէք սովորած չլինէի թէ շատ ժամանակ առաջ աշխարհիս մի անկիւնում ի՞նչ է պատահել, բայց իմ խոհականութիւնը կրթէի, օգտուէի ալն անմիջական ընդունակութիւններից, որ Աստուած տուել է ինձ, ինքս ինձ կսովորէի նրան սիրել, նրա արած գործերը սիրել, բարին կամօնալ և նրան դուր գալու համար երկրիս վրայ ունեցած բոլոր պարտականութիւններս կատարել: Մարդկային բոլոր գիտութիւնները սրանից աւելի ի՞նչ կարող են սովորեցնել ինձ:

Ռուսոն Մօտիէրում նույնպէս երկար չկարողացաւ մնալ և զնաց Բիլլէի մէջ գտնուող «Պետերսինգէլ» կոչուած փոքրիկ կղզին և բուսաբանութեամբ էր պարապում ալնտեղ. սակայն Բերնի կառավարութիւնն ալդտեղից էլ քչեց նրան, 1765—1770 թ. Ժան-Ժակը թափառում է Անգլիայի և Ֆրանսիայի զանազան վայրերում և ոչ մի տեղ չի կարողանում երկար մնալ ու հանգստանալ: Այս բոլորը հարկաւ պէտք է ազդեցութիւն ունենար նրա տրամադրութեան վրայ. նա հետզհետէ հեռանում է իւր բոլոր բարեկամներից և սիրում է քաշուած ու միայնակեաց կեանք վարել: Երկարատեւ հալածանքներից նրա հոգին ճնշում է և ալդ վառ երևակալութեամբ օժտուած ինքնուրոյն մարդը վերջը մարդատեաց է դառնում: Ալդ միջոցներին Ռուսոն զրոււմ է իրեն արդարացնող մի գրուածք ու կամենում է դնել Փարիզի լալտնի Նօտր-դամ տաճարի բեմի վրայ, որպէս զի ալդ ճանապարհով հասնի Լուդովիկոս XVI ձեռքը. ալդ ձեռագրին նա կցում է հետեւեալը. «Նախախնամութեանը հաւատացած աւանդ շնչուածների պաշտպան, արդարադատութեան և ճշմարտութեան Աստուած, ընդունիր այս աւանդը, որ մի տարաբաղդ օտարական դնում է քո սեղանի վրայ և քո նախախնամութեանը լանձնում վստահութեամբ»: Իրեն կոչում է նույնպէս «մի մարդ, որ մաղձ և կեղծիք չունի, թշնամի է անառդարութեան, որ երբէք ոչ ոքի անարդարութիւն չէ արել ու երբէք էլ չի անի»: Տաճարի բեմը չըջապատուած լինելով հրկաթեայ վանդակով, Ռուսոն չի կարողանում բեմի վրայ դնել ալդ գրուածքը և կարծում է ըոր նոյն իսկ երկինքը համաձայն է մարդկանց անարդար գործին:

Ժան-Ժակն իւր կեանքի այս խափառական շրջանու

գրեց «խոստովանութիւնները», որ նրա ամենատարածուած երկերից մէկն է. դեռ Մօնմօրէնսում եղած ժամանակ նա ծրագրել էր մի աշխատութիւն գրել, որտեղ «անօրինակ» ճշմարտութեամբ նկարագրուած պէտք է լինէր իւր ներքին, հոգեկան աշխարհը: Նթէ արիութիւնն ու սրտաբացութիւնը բաւական լինէին արդարեւ մի խնդիր լուծելու: համար, ակն ժամանակ Ռուսօի կեանքի նկարագրութիւնը ճիշտ որ վերին աստիճանի ճշտութեամբ է պատկերացրած, որովհետեւ արդ երկու լատիութիւններն էլ արտացոլում են նրա մէջ: Բայց ինկատի ունենալով այդ աշխատութեան գրելու ժամանակը և հեղինակի հոգեկան տրամադրութիւնը, կարելի է օրոշ ասել, որ չափազանցութիւնները մեծ դեր են խաղում: Վստատովանութիւնները 12 գրքից են բաղկացած. առաջին բաժանման առաջաբանում նա ասում է. «Ես կամենում եմ մարդկանցը ցոյց տալ մի մարդու իւր բոլոր բնական լատիութիւններով, այդ մարդը ես կլինեմ»՝ նոյն միտքը նա կրկնում է և երկրորդ բաժանման ներածութեան մէջ. «խոստովանութիւններին խնկական նպատակն է՝ իմ ներքին աշխարհը ճշտութեամբ ներկայացնել կեանքիս ամեն տեսակ հանգամանքների մէջ»: «Վստատովանութիւնները» տպագրելուց առաջ, Ռուսօն Փարիզի գրական շրջաններում կարողում էր հատուածաբար 1770—1771 թ. ձեռք և ունկնդիրների համակրանքն ու գովասանքը լսում այդ ժամանակամիջոցում գրեց նա գրաֆ Վիլհոլմու խնդրանք «Contrat social»-ի սկզբունքների համաձայն «խորհրդածութիւններ Լեհաստանի կառավարչական ձևի մասին» աշխատութիւնը արդ միջոցին Լեհաստանի առաջին բաժանումն արդէն վճռած բա ն էր—Ռուսօն մեծ զուարճութիւն էր զգում բուսաբանութեամբ պարապելով, որ մինչև իւր կեանքի վերջը չարունակեց. նա հրատարակեց «տարրական նամակներ բուսաբանութեան մասին» աշխատութիւնը: Սակայն զրական աշխատութիւնները նրա հոգեկան մռայլ տրամադրութիւնը չկարողացան փոխել և նա հետզհետէ աւելի ու աւելի հեռանում էր մարդկանց շրջանից. 1772թ. նա վճռեց մինչև անգամ իւր բարեկամների հետ ունեցած նամակագրութիւնն էլ ընդհատել և չարունակել: 1778 թ. մալիսին վերջին անգամ թողեց Փարիզը և Էրմէնօնվիլում պառսպարան գտաւ Ժիրարդէնի գղեպկում. բայց կարճատեւ եղաւ նրա բնակութիւնն այդ պալատում, որովհետեւ վեց շաբաթից լետով, 1778

Թ. լուլիսի 4ին լանկարծամահ եղաւ, 66 տարեկան հասակում։ Ռուսօի անձնաւորութիւնը շատ հետաքրքրական կողմեր ունի. նրա միտքն աղնիւ գործողութիւնների էր ձգտում, մեծ և ինքնուրոյն գաղափարներ ստեղծելու ընդունակութիւն ունէր. զգացմունքները բաղմակողմանի էին, երեակալական թախքը սաւառնող, նրա վշտի և ուրախութեան համար հաւասարաչափ բարախող սիրտը մարդկութեան ապագան բարելաւելու նպատակին էր ձգտում։ Նրա ընթերցողների հետաքրքրութիւնը միշտ վառ է մնում, որովհետեւ շարունակ անսովոր, տարօրինակ մտքեր է կարդում՝ թէ բարոյականութեան, թէ բնաւորութեան և առհասարակ կեանքի մասին։ Նրա «խոստովանութիւնները» երիտասարդների ընթերցանութեան նիւթ չէ, բայց և աչնպէս մարդկային թերութիւնների արտացոլումն է. մարդիկ սովորաբար արտաքին աշխարհի համար եօթը քողով են պատում իրենց մոլութիւնները և անտեսանելի դարձնում, որպէս զի ուրիշները չիմանան և վատ կարծիք չունենան իրենց մասին։ Ռուսօն արիւարար բաց է անում իւր սիրտն ամբողջ աշխարհի առաջ և պատմում իւր մոլութիւնները. ընթերցողը Ռուսօի անհատական մոլութիւնների պատկերը տեսնելով՝ ըմբռնում է առհասարակ մարդկային և մասնաւորապէս աչն ժամանակուայ ֆրանսիացիների, կամ աւելի ճիշտն ասած՝ փարիզցիների վարք ու բարքը։ Երբ նրա հոգեկան ոյժի գիտակցութիւնն արթնանում էր և նրա սիրտը հպարտ արիւթեամբ լըցնում, երբ նա, ինչպէս բարքերի մի նոր վերանորոգիչ, ընդհանուր լեղաշրջումն էր պահանջում, աչն ժամանակ նրա զէպի բարին ունեցած սէրն աչնպիսի ոյժ էր ստանում, որ նա ալլես ինքն իրեն չէր կարողանում զսպել։ Անկախութեան և բացարձակ ազատութեան սէրն աչնչափ ուժգին էր նրա մէջ, որ բարոյական պարտքի հրամանն անլսելի էր դառնում նրա հոգու համար, ալդ պատճառով նրա ներքին, հոգեկան աշխարհում կռիւն անպակաս էր. բարին, բարոյականը երբեմն լաղթանակում էր, բայց միշտ տիրող չէր հանդիսանում։ Ինչպէս մրկածուի ալիքների վրայ տատանուող նաւը չի կարողանում միշտ միւննոյն ուղղութեամբ ընթանալ անալթաք, աչնպէս էլ նրա լաւագոյն համոզումների ղեկը միշտ չէր կարողանում զանազան հակումների ու բաղձանքների արգելքների միջով հաստատուն բնաւորութիւն ստեղծելու նպատակին հասցնել։ Ալդպիսով՝ նրա կամեցածը միշտ չէր համապատասխանում նրա արածին։

և նրա լաւագոյն հար իսկական տիրապետող չհանդիսացաւ, ալլ մնաց իբրեւ թեկնածու։ Նա լրջութիւն ունէր ձգտելու և արիութիւն՝ հետազօտելու, բալց նրա բարոյագիտական հայեացքը չկարողացաւ հաստատուն ընաւորութիւն դառնալ այն չափով, որ չափով կարեւոր էր կեանքի մէջ դրանով ղեկավարուելու համար։

Որչափ էլ նրա բարոյական թերութիւնները մեծ լինին, այնուամենայնիւ երբ ի նկատի ունենանք, որ նա մարտնչում էր մտքի ազատութեան համար, պէտք է մեծ արժէք տանք նրա դործունէութեանը. ինչ որ նա արեց իւր ժամանակի տիրապետող հայեացքների դէմ, կարող էր միայն Ռուսօի պէս հանճարն անել։

Ժ. Ժ. Ռուսօն Ֆրանսիայի 18րդ դարի ամենամեծ մարդկանցից մէկն էր։ Ֆրանսիացիք, որ հալածում էին նրան, իրենց լանցածքը քաւեցին և նրա մարմինը լեղափոխութեան միջոցին էրմօնէնվիլի դերեղմանատնից հանելով՝ փոխադրեցին Փարիզ և թաղեցին Պանթէօնում— անմահների տաճարում։ Նրա ոսկրները հանգստանում են Վօլտէրի երկրպիւն մնացորդների մօտ, և այսպէս ալդ երկու մարդկանց մարմինները, որ կենդանութեան ժամանակ իրար ատում էին, երկրորդ անգամ հողին լաճնուեցան մեծ փառքով։ Նրկու հանճարների երկերն էլ մինչև այսօր կարդացւում են ամբողջ քաղաքակիրթ աշխարհում թարգմանուելով ամեն լեզուներով։

Ժան Ժակ Ռուսօի էմիլ կամ դաստիարակութեան մասին— «Emile ou sur l'éducation»—գրուածքը նրա ամենամեծ և ամենաճանաւոր ու հռչակուած աշխատութիւնն է։ Ռուսօն քսան տարի մտածել և ելեք տարի աշխատել է էմիլի վրայ, Թէև աշխատութիւնը կրում է նաև դաստիարակութեան մասին Վերտառութիւնը, սակայն մտնկավարժական մի համակարգութիւն սխտեմ չէ սովորական մտքով, «Իմ սխտեմը, ասում է հեղինակը, ընութեան դարդացման ընթացքն է։

«Էմիլի» առաջին գրքում մի ընդհանուր, համառօտ ներածութիւնից լետոյ Ռուսօն խօսում է նորածին երեխաների և մասնաւորապէս էմիլի հոգացողութեան մասին, մինչև վերջինիս խօսելու կարողութիւն ձեռք բերելը։ Նրկրորդ գրքում նկարագրուած է էմիլի դաստիարակութեան ալդ ժամանակամիջոցից սկսած մինչև 12 տարեկան հասակը. երրորդը հասցնում

է Էմիլին մինչև 15 տարին, չորրորդը՝ մինչև նրա պատկուելը, իսկ հինգերորդում նկարագրուած է Էմիլի կին Սոֆիայի դաստիարակութիւնը:

«Էմիլը», սխտեմատիկական մանկավարժութիւն չէ, որովհետև հեղինակը մէջ է բերում ահագին քանակութեամբ կողմնակի գաղափարներ, որոնք մանկավարժութեան հետ շատ քիչ կամ բոլորովին կապ չունենա: Ռուսոն արդէն «Լ. Ե. Զ. Լ. Ե. Լ. Ե. Լ.» հինգերորդ մասում տուել էր մի շարք հիմնական մտքեր, որոնք վերաբերում են մանուկների կրթութեանը, դիսցիպլինային, նրանց մարմնի և զգայարանների զարգացմանը, երեակական պահանջների մերժմանը, լիշողութեան չափից դուրս ծանրաբեռնելուն և այլն. այս համառօտ ծրագիրն ընդարձակեց Էմիլի մէջ, որ ինչպէս ասացինք, թէ և մանկավարժական մի ամբողջ համակարգութիւն չէ ներկայացնում, բաց ներքին կապով միացած մի ամբողջութիւն է կազմում:

Ռուսոն երեք տեսակ դաստիարակութիւն է ընդունում. ա. բնութեան դաստիարակութիւն, բ. մարդկանց դաստիարակութիւն և գ. իրերի դաստիարակութիւն: Սակայն իսկական, զիտաւորեալ դաստիարակութիւնը—խիստ մտքով առած—միայն մարդկանց ձեռքով է լինում. այն բոլոր փոփոխութիւնները, որ մենք կրում ենք բնութեան և իրերի շնորհիւ և որոնք զարգացնելով մեր զգայարաններն և ուժերը մեր փորձառութեան սահմանն են ընդարձակում, իսկապէս դաստիարակութեան հետեանքներն են: Միայն մարդս որոշ գիտակցութիւն ունի այն դաստիարակչական նպատակի մասին, որին հետևում է շարունակ: Այդ նպատակը հենց բնութեան նպատակն է, որովհետև մենք չենք կարող իշխել բնութեան վրայ, իսկ բնութիւնը կարող է մեզ վրայ իշխել: Միայն այն դէպքում մեր նպատակին կհասնենք, երբ մարդկանց ու իրերի դաստիարակութիւնը հետևի բնութեան. մարդս ապրում է համաձայնութեամբ նոյն իսկ իւր անձի հետ և աւելի ոչինչ չէ ցանկանում, քան այն, ինչ որ իրեն լատուկ բնութիւնը պահանջում է: Այսպիսով դաստիարակութեան նպատակն է լինում ոչ խոհականութեամբ կանոնաւորուած կամքի զարգացումը և ոչ էլ քաղաքակրթութեան միջոցներով ձեռք բերած զարգացումը, այլ միայն ինքնաբաւականութեան այն զրու-թիւնը, որ պահանջում է մարդ իւր բնութեան կամ սրտի հակումների համաձայն, այսինքն ֆիզիկական զիւրակեցութիւնը:

Բնութիւնն է ալն հիմքը, որի վրայ հաստատուում է ալդ և ալն չափը, որով չափուում է դրա լիակատար լինելը: Մենք որոնում կամ խոյս ենք տալիս ոչ թէ նրանից, ինչ որ որոշում է մեր խոհանոցութիւնը, ալլ բնդհակառակը, երջանկութեան և կատարելութեան մասին մեր խոհականութեան դատողութիւնը հիմնուում է մեր զգացումների վրայ: Բայց բնութիւնն ինչպէս պէտք է զարգացած բնաւորութեան արժէքը չափող հանդիսանայ: Ռուսոն պատասխանում է թէ «մարդս բնութիւնից բարի է», բայց բնածին լատկութիւնն ուրիշ է, բարի կամ լաւ լատկութիւնն ուրիշ, Նրա տեսութեամբ բարին չէ զարգանում, բարին բնածին ոլթ է, իսկ չարը ձեռք բերած թուլութիւն: Այսպէսով ուրեմն դաստիարակութեան ընդհանուր նպատակն անփոփոխ հաստատուած է բնութեան միջոցով: Իսկ ձրն է ալն մասնաւոր նպատակը, որ դաստիարակութիւնն ի նկատի պէտք է ունենայ առանձին անհատներին դաստիարակելու ժամանակ: Ռուսօի ասելով՝ այս վերջինն էլ ամփոփուած է առաջինի մէջ: Մեր քաղաքացիական կարգ ու կանոնները և հասարակական դաստիարակութիւնը մարդուն անբնական դրութեան մէջ են դնում և լափշտակում նրա իսկական գոլութիւնը: Բնական կարգով բոլոր մարդիկ միմեանց հաւասար են և նրանց ընդհանուր կոչումն է մարդ լինելը: ուրեմն դաստիարակութիւնն էլ ընդհանուր պէտք է լինի և ոչ թէ մասնագիտական կամ կոչման համապատասխանող: Միայն ալն ժամանակ մարդս լարմար կլինի ամեն տեսակ առանձին կոչումներ ունենալու, երբ ընդունակ կլինի իբրեւ մարդ ապրելու, ալսինքն այս կեանքի չարն ու բարին կարող կլինի տանել, կդիմադրի ամեն տեսակ պատահարներին, իւր գոլութիւնը կպահպանի, իւր զգալարանները, ընդունակութիւնները կգործադրի—մի խօսքով՝ միմիայն բնական եղանակով դաստիարակուածը իսկական մարդ կլինի: Ռուսօի դաստիարակութիւնը մանկան ներքին, հոգեկան դրութիւնները չէ փոխում, վերակազմում, ալլ աշխատում է միայն արդէն առաջուց պատրաստի եղածն արթնացնել և պահպանել: Բնութիւնն աւելի զօրեղ է, քան դաստիարակութիւնը: դորան է մօտենում քիչ թէ շատ անհատի առանձնալատուկ կեանքը: Կարելիութեան և իրականութեան միջին անդամներն են շարժողութեան բնական ձգտումը, ըմբռնելու կարողութիւնը, լիշողութիւնն ու երեակալութիւնը, մարդուս սրտում եղած

արդարութեան և անարդարութեան զգացմունքը և վերջապէս մանկան ամենաէական կարողութիւնը, զգալութիւնը, որի միջոցով միւս բոլորը հետզհետէ աստիճանաբար զարգացման է հասնում:

Սակայն ինչպէս, ինչ միջոցներով ու ճանապարհներով կարող է դաստիարակը բնութեան համապատասխանող կարելին՝ դարձնել իրական. Ռուսօն պատասխանում է. «Եթէ կամենում էք, որ մանուկը պահպանէ իւր սկզբնական ձևակերպութիւնը, հենց առաջին վարկեանից պահպանեցէք նրան. ղիտեցէք բնութիւնը և հետեցէք ալն շաւղին, որ նա ցոյց է տալիս ձեզ, որովհետեւ եթէ դուք կամենաք նրա հրահանգներն ուղղել, զրանով միայն նրա գործը կկործանէք, նրա ջանքերի հետեանքը կարգիլէք և կթուլացնէք»։ Այստեղից պարզ երևում է, որ Ռուսօն դաստիարակութեան գործունէութեան լաջող հետեանքը կապում է բնութեան փորձնական ճանաչողութեան հետ, որ ձեռք է բերում գիտողութեամբ: Եթէ մենք արգելք դնենք բոլոր գէպի վեր աճելու բնական լատկութեանը, նա ալ լատկութիւնը չի կորցնի և հենց արգելքը վերացաւ թէ չէ, կրկին գէպի վեր կբարձրանալ. նոյնը կարելի է ասել և մարդուս բնական լատկութիւնների մասին. հենց որ դրութիւնը փոխում է, հակաբնական ճնշուած դրութիւնն անցնում է և վերադառնում բնականը. ալդ ապացոյց է, որ դաստիարակութիւնը պէտք է մանկան բնական սովորութիւնները զարգացնէ: Ալդ լատկութիւններն երևան են զալիս, երբ մանուկն իրեն շրջապատող իրերի հետ փոխադարձ լարաբերութեան մէջ է մտնում:

Ահա վերոյիշեալ հիմնական հայեացքների մէջ են գրտնում Ռուսօի դաստիարակչական բարենորոգումների առաւելութիւնների և թերութիւնների սաղմերը. դրանցից են ծագել օգտաւէտ բարեխառնութիւնները և անցողական, անհիմն ենթադրութիւնները զրանցով Ռուսօն հետևողներ և հակառակորդներ ունեցաւ մանկավարժների մէջ: Ալդ հիմնական հայեացքներով պայմանաւորում են երկու էական, Ռուսօի դաստիարակութեան իրադործումը բնորոշող մտքերով. երբ նա հասարակական կարգերի մասին ասում է, թէ նրանք մարդուն օտարացնում են իրենից՝ հակաբնական սովորութիւններ կապելով նրա վրին և թէ հասարակական զարդոցները նոյնպէս ալդ նպատակին են հետևում, պարզ է, որ ընտանեկան դաստիարակութեան

բողոքները, որ Ռուսոն հաւասարեցնում է բնական սովորութեան, պէտք է հասարակական դաստիարակութիւնից դերազանց լինի և բոլորովին առանձնացած դաստիարակութիւնը—ալսինքն երբ մի մանկան կրթութիւնը լանձնում է մի դաստիարակի—ամենից լաւ պէտք է պահպանէ երեխային ամեն տեսակ միասակար ազդեցութիւններից և հեշտութեամբ ամենալաջող հետեանքներն ունենալ։ Միւս կողմից նրա պատճեններից հետեում է, որ մանուկը սովորում է առանց ստիպողական միջոցների ու առանց տհաճութիւն զգալու. դաստիարակութիւն ու դաստիարակութիւնը նրա համար միայն մի խաղ է, որովհետև նրա հոգին է ճնշում և ոչ մարմինը։ Դաստիարակը պէտք է միմիայն մանկան ալն լատկութիւնների վրայ ուշադրութիւն դարձնէ, որոնք բնական են և բնական դրութիւն են առաջացնում։—

Էմիլը զիրք ունեցող ծնողների զաւակ է, բայց որք. նա մի սովորական երեխայ է, առանց արտաքույ կարգի հոգեկան լատկութիւններ ունենալու։ Բարեխառն կլիմայի տակ ծնուած լինելով՝ նա բարեկազմ, ուժեղ և առողջ մանուկ է. նրա դաստիարակը, որ հօր բարեկամն է, դեռ երիտասարդ է և լաւ դաստիարակութիւն ստացած. նա առաջնորդում է Էմիլին հինգ ծնունդու վայրեկեանից մինչև ալն ժամանակամիջոցը, երբ մանուկը տղամարդ դառնալով՝ ալլ ևս կարիք չպէտք է ունենալ ուրիշի օգնութեանը և ինքն իրեն պէտք է կարողանալ առաջնորդել. այդ կէտին Էմիլը հասնում է 25 տարեկան հասակում։ Ռուսոն կարծես թէ իւր իսկ մանկական, ծնողների խնամքից զրկուած, կեանքն է Էմիլին վերադրում, սակայն իւր անտէր թափառելուն փոխարինում է դաստիարակի խիստ հսկողութիւնը. ինչպէս ինքը սիրում էր քաղաքների ժխորից հեռու ապրելը, ալնպէս էլ Էմիլը բնակւում է գիւղում։ Հասարակ, գիւղական կեանքը և օդն ամրապնդում են Էմիլի մարմինը, իսկ հոգեկան առողջութիւնը պահում է նա հեռու լինելով մեծ քաղաքներից։ Նրա մանկական առաջին շրջանում միայն ալն սովորութիւններն են խնամւում, որ պահանջում են նրա բնութիւնն ու շրջապատը. նրան չեն ստիպում իւր անդամներն ազատ շարժելու, չեն արգելում, որ շոգի ու ցրտի ենթարկուի. մինչև անգամ թող են օտայիս, որ ցաւագին զգալութիւններ ունենալ։ Չափաւորութիւնն ու աշխատանքը ամենալաւ բժիշկներն են նրա. առողջութիւնը պահ-

պանելու համար, հետզհետէ սովորում է նա իւրն շրջապատող անձանօթ առարկաներից չվախենալ, միմիայն ցանկանալ արն, ինչ որ իսկական պահանջ է նրա համար:

Մինչև 6 տարեկան հասակը առաւելապէս էմիլի մարմնական կրթութեան վրայ է ուշադրութիւն դարձնում, իսկ բանական մինչև 12 տարեկան դառնալը նրա հոգին է գործունէութիւն սկսում: Նրա հոգեկան զարգացումը խաղով և զուարճութեամբ է սկսում, ապրում է երջանիկ, որովհետեւ նրա ուժերն ու ցանկութիւնները հաւասարակշռութիւն են պահպանում, էմիլն իւր թուլութիւնը զգալով, զգում է նաև, որ ինքը կախումն պէտք է ունենալ ուրիշից, բայց ստորկական հնազանդութեան փոխարէն, կամաւ է հնազանդում, հասկանալով որ կարիք ունի աղպէս անելու, Վատ սովորութիւնները չեն կարող նրա ուրիշ հակումներն արմատախիլ անել, քանի որ բնութիւնից բարի է և շրջապատն էլ պահպանում է նրան ամեն տեսակ վատ ազդեցութիւններից, Նա կարողանում է լիակատար աշատութեան մէջ երեսն հանել իւր բնատրութեան սաղմերը, առանց խելքին զօր տալու և առանց ուրիշների հրամանները կատարելու: Նրան օրինակ է հանդիսանում իւր առաջնորդը, որ ճարտարութեամբ աւելի ոյժ է տալիս նրա բնատրութեանը: Բարւոյ ու չարի ճանաչողութիւնը լարմար ժամանակն է ըմբռնում, ինչպէս և մարդկանց միմեանց հետ ունեցած լարաբերութիւնը: Նա ստելու կարիք չունենալով՝ հաւատարիմ է մնում իւր բնութեանը, քանի որ ի ծնէ բարի է:

Այս բարոյական դաստիարակութեան հետ զուգընթացաբար ինչպիսի պարագմունք պէտք է ունենալ մանուկը, որ նրա խկզբանէ բարի բնատրութիւնը պահպանուի: արդեօք կանոնաւոր դասաւանդութիւնը հենց փոքր հասակից պէտք է սկսուի: Որովհետեւ լիչողութիւնը միաժամանակ զարգանում է դատողութեան ուժի հետ և մանուկների բոլոր գիտութիւնը հիմնւում է տպաւորութիւնների վրայ, առանց հասկացողութեան, ուրեմն և լիզուր ուսուցումը միմիայն բառերի ուսուցումն կլինէր: մանուկը դեռ ևս զաղափարներ չունի, ուստի և նա ոչ աշխարհագրութիւն և ոչ պատմութիւն կարող է ըմբռնել: Բաւական է, որ նրա մէջ կարգաւոր ցանկութիւն առաջ բերենք և ոչ թէ ստիպողական պահանջ համարենք: Բայց նա շարունակ վարժեցնում է մարմինը և իւր ուժերը

դարձնում է գործիք իւր հասկացողութեան համար: Նրա մարմնի անդամների զարգացման հետ զուգընթացաբար առաջ է գնում և հոգու զարգացումը: Խաղատեղն է նրա առաջին դասարանը և մարմնական վարժութիւններն առաջին դասարանը: Այս բնական և մեքենական վարժութիւնների հետ ի միասին զարգանում են նաև նրա զգալարանները, որոնք առաջնորդում են նրան դէպի ճիշտ դատողութիւնը: Էմիլի շօշափելիքը զարգանում է, որովհետև նա շօշափելիքով է ճանաչում, ինչ որ կարելի է ձեռք բերել, խաղում է նաև մըթնումը, որպէս զի վստահ չարժողութիւններ անէ: Նա վարժ մկանունքների ուժ ունենալով՝ կարողանում է դատել ոչ միայն մարմինների լատկութեան, մեծութեան և կերպարանքի, այլ և կշռի ու ծանրութեան մասին: Նրա աչքի տեսողութիւնը զարգանում է համապատասխան վարժութիւններով: Սակալն այս բոլորը նա ըմբռնում է ոչ թէ իբրև իւր առաջնորդի մտածութեան աղիւնք, այլ, ըստ երևոյթին, իբրև իւր սեպական խելքի արտայայտութիւն: Նա գծեր ու շրջագծեր է քաշում, նկատում է անկիւնների լարաբերութիւնը, տեսնում է կալծի փալլը, լսելիքով որոշում է ձայնի հեռաւորութիւնը, զգում է պարզ երգի վայելչութիւնը և այլն:

Այսպիսով Էմիլը դառնում է 12 տարեկան. նրան ուրիշ ոչ մի միջոցով չեն դասաւանդում, բացի բնութեան տուածից. նա ուրիշ ոչ մի գիտութիւն չէ ձեռք բերում, բացի նրանից, ինչ որ իւր բնական ընդունակութիւնն է թելադրում: Իւր զգալարանների գործունէութեամբ բաւականաչափ ճանաչելով այն ամենը, ինչ որ կալ իւր շուրջը, նա ցանկանում է նաև երկինքը ճանաչել: Բացի իսկական երկնային երևոյթների դիտողութիւնից, նա գիտէ նաև դրանց բացատրութիւնը, որ ձեռք է բերում իւր առաջնորդի տուած շնորհալի հարցմունքների միջոցով. իւր նկարած քարտէզներով՝ նա գաղափար է կազմում հալոբնիքի և ապա ամբողջ երկրի մասին. պարզ փորձերով նա ճանաչում է մարմինների ֆիզիկական լատկութիւնները: Եւ որովհետև իրերի գաղափարներն անմիջապէս ինքն է ձեռք բերում, դրանք աւելի պարզ և որոշ են:

Հետզհետեւ, որքան աւելանում են նրա ճանաչողութիւնները, ալնքան ևս պարզւում է նրա դատողութիւնը. նա արդէն սկսում է իրերը զնահատել՝ ընդհանուր հայեցակէտից. ինչո՞ւ համար են իրերը. այս հարցմունքը բռնում է բոլոր

գարուական գաղափարների տեղը, որոնց մասին նա դեռ ևս հասկացողութիւն չունի: Էմիլը ամբողջ գրադարանը կազմում է Ռօբինզոնի պատմութիւնը, որով նա պէտք է դատէ մարդկանց պարապմունքի և արհեստի իսկական օգուտը: Մարդկանց առաջացրածը կարող է նորից ոչնչանալ մարդկանց ձեռքով և միմիայն բնութիւնը կարող է անջնջելի նկարագիր դրոշմել:

Էմիլը դառնում է 15 տարեկան. զգալարանական ըմբռնումներով և ճիշտ գաղափարներով ճոխացրած նրա սեպհական խելքը, առանց ուրիշի օգնութեան, ինքն իրեն է դասաւանդում. աշխատասիրութիւնը, չափաւորութիւնը, համբերութիւնը, հաստատամտութիւնն ու արիութիւնը բնորոշում են նրա կամքը: Այս հասակում Էմիլը գաղափար չունի առաքինութեան վեհ գաղափարի ու բանաստեղծութեան մասին. նա վարենի է, գիտէ միայն երկրալիւնը և բացի օգտի գաղափարից ոչինչ հասկացողութիւն չունի իրերի լարաբերութեան մասին:

Սեռական զգացմունքների արթնացման շրջանում Էմիլն անմեղ է մնում, որովհետեւ չալը սրտից չէ բղխում, ալ զբոսից է դալիս, իսկ ալդ տեսակէտից նա ապահով է, ոչ ոք չկալ, որից վատ բան սովորի:

Այնուհետեւ դաստիարակն աշխատում է պատանուն արնպէս պահել, որ նա փալլուն և միալն ըստ երեւոթին եղած երջանկութիւնը տարբերէ իսկական և ցանկալի երջանկութիւնից. նրան սովորեցնում է սչ թէ շողոքորթ ֆրաղներ սիրոյ և վշտակցութեան մասին, ալ իսկական ցաւակցութեան զգացմունք է աշխատում ներշնչել նրան: Այս հատուածներից սկսած արդէն «Էմիլի» մէջ հետզհետէ անլալտանում են մանկավարժական ցուցմունքները. բնութեան մարդ դարձած Էմիլը դառնում է լեղալիտական մարդատեաց. Էմիլ անուան տակ ծածկում է ինքը, Ռուսօն:

Ապա հետեւում է «Սաւոլեան աթոռակալի հաւատոյ դաւանանքը», որի մասին արդէն խօսեցինք:

Հինգերորդ ու վերջին գրքում հեղինակը նկարագրում է Սոֆիալին իբրեւ օրինակելի աղջիկ. դաստիարակի միջնորդութեամբ Էմիլը պսակում է Սոֆիալի հետ: Երբ Էմիլը հալը է դառնում, արձակում է իւր դաստիարակին հետեեալ խօսքերով. «Լստուած սչ անէ, որ զաւակիս դաստիարակութիւնը

ձեզ լանձնեմ, քանի որ դուք նրա հօրը դաստիարակեցիք: Եւս սուրբ և քաղցր պարտականութիւնը ոչ ոք չպէտք է կատարէ, բացի ինձնիցս:

Ահա ալս է «Էմիլի» համառօտ բովանդակութիւնը, որի մէջ արծարծուած մանկավարժական մտքերից շատերն ընդունուեցան հետագայում և ուրիշ տաղանդաւոր մանկավարժների գրուածքների հիմնաքարը կաղմեցին: Այժմեան դիտեալան մանկավարժութիւնն իւր սկզբունքները լարմարեցնում է հոգեբանական պահանջներին, որոնք ուրիշ խօսքով կարող են և բնական կամ բնութեան պահանջներ կոչուել, քանի որ հոգեբանութիւնն ուսումնասիրում է մանկան և առ հասարակ մարդու բնութեան լատկութիւնները: Ինչպէս որ Ռուսօն առանց «բնութեան» դաստիարակութիւն չէր ընդունում, այնպէս էլ այժմեան դիտեալան մանկավարժութիւնը դաստիարակութիւն չէճանաչում առանց հոգեբանական օրէնքների, որոնց հետ միանում են և բարոյագիտական օրէնքները:

«Էմիլի» գերմաներէն բաղմամբ թարգմանութիւններից մենք ընտրեցինք լատինի մանկավարժ և դպրոցական աւագ խորհրդական—Oberschulrat—դր. Չալվիւրկի թարգմանութիւնը, որ ծանօթութիւններով ճոխացրած հրատարակութիւն է: Չեւքի տակ ենք ունեցել նաև «Էմիլի» բնագիրը: Ժան Ժակ Ռուսօի կենսագրութիւնը գրելիս օգտուել ենք հետեւալ աշխատութիւններից. J. J. Rousseaus Leben; von dr. Theodor Vogt (Professor an der Wiener Universität) և Geschichte der Pädagogik; Von Prof. Karl von Raumer (չորրորդ հրատարակութիւն):

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆՑ